

Մետաղական հանքարդյունաբերության ոլորտն ուսումնասիրող աշխատանքային խմբի առաջին առաջադրանքի՝ Ամուլսարի ոսկու հանքի փաստահավաք ուսումնասիրության
Լևոն Գալստյան, աշխարհագրագետ, գեոմորֆոլոգ

Աշխատանքային խմբի գործունեության մեկնարկին ակնկալվում էր, որ խմբի անդամներից յուրաքանչյուրն իր մասնագիտական գիտելիքների շրջանակներում կուսումնասիրի Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման հետ կապված բոլոր փաստաթղթերը: Կգնահատի հանքավայրի շահագործման թույլտվություն ստացած Լիդիան Արմենիա ընկերության կողմից ՀՀ նախորդ կառավարությանը ներկայացված տեղեկությունների և հաշվետվությունների ամբողջականությունը, հավաստիությունը, գիտական հիմնավորվածությունը և կհամադրի դրանք գիտական, մասնագիտական, փորձաքննական այլ տեղեկությունների հետ: Կգնահատի նաև պետական մարմինների իրականացրած փորձաքննությունների, տված եզրակացությունների մասնագիտական հիմնավորվածությունը, անաչառությունը, անկախությունը, օբյեկտիվությունը և համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին: Նաև ակնկալվում էր, որ Լիդիան Արմենիա ընկերության ներկայացրած տեղեկությունների ու ծրագրերի համադրություն կիրականացվի տեղում՝ դաշտային ուսումնասիրությունների տեսքով:

Այս կարծիքը կազմել է՝ առաջնորդվելով հետևյալ մեթոդաբանությամբ. հարցադրումներ, որոնց պատասխանների հիման վրա հնարավոր կլինի եզրակացնել, թե որքանով են պահպանվել ՀՀ օրենսդրության պահանջները՝ կապված Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման թույլտվությունների հետ:

Ուսումնասիրության համար հարցադրումների ոչ ամբողջական ցանկը հետևյալն է.

1. Արդյո՞ք Լիդիան Արմենիան 2016թ. ՇՄԱԳ փաստաթղթում ներկայացրել է հանքի խոռոչներում և թափոնների լցակույտում թթվային դրենաժի մեղմացման կամ կառավարման պլան և արդյո՞ք այն ենթարկվել է փորձաքննության և ու՞մ կողմից:
2. Արդյո՞ք ներկայումս թթվային դրենաժի մեղմացման պլանը համընկնում է 2016թ. ՇՄԱԳ-ում ներկայացվածի հետ:
3. Արդյո՞ք Լիդիանը 2016թ. փորձաքննության է ներկայացրել թափոնների լցակույտում ջրերի մաքրման կայանի նախագծեր, անցել են դրանք տեխնիկական անվտանգության փորձաքննություն, և արդյո՞ք դրանք պարունակում են վթարների ռիսկերի գնահատում:
4. Երբ ներկայացվել է ՇՄԱԳ-ը պատկան մարմիններին, արդյո՞ք նրանք իրականացրել են հավելյալ փորձաքննություն, թե ոչ: Եթե այո, ապա ովքե՞ր, ե՞րբ, ինչպիսի հավաստող փաստաթղթեր կան, թե՛ ուղղակի արտագրել են Լիդիանի փորձաքննություններից և հաշվետվություններից:
5. Արդյո՞ք Ամուլսարի բացահանքի և ոսկու կորզման ֆաբրիկայի տեխնիկական անվտանգության փորձաքննության ներկայացրած փաստաթղթերը պարունակում են վթարների կառավարման պլաններ:

6. Արդյո՞ք Լիդիանը փորձաքննության է ներկայացրել ցիանիդի տեղափոխման տրանսպորտային ուղիների և դրա պահպանության վերաբերյալ փաստաթղթեր:
7. Արդյո՞ք գնահատված է Որոտան-Արփա թունելի տեխնիկական վիճակը մինչև ՇՄԱԳ-ը ներկայացնելը, եթե այո, ապա ո՞վ է դա կատարել և որտե՞ղ է կարելի ծանոթանալ այդ տվյալներին:
8. Տարբեր պետական մարմինների տրված դրական եզրակացությունների մեջ որքանո՞վ են ներկայացված վերոնշյալ հարցերը, և ովքե՞ր են փորձաքննել այս խնդիրները: Լավ կլինի, որ համապատասխան եզրակացությունները ստորագրած անձինք նույնպես մասնակցեն որևէ նիստի և պատասխանեն այս հարցերին կամ գրավոր ներկայացնեն իրենց պատասխանները:
9. Ինչո՞ւ մինչև 2016 թվականը Ջերմուկ քաղաքը չի ճանաչվել ազդակիր համայնք, ի՞նչ հիմնավորումներով: Եթե դիմել են ու չի ճանաչվել, ապա դրա հիմնավորումները նույնպես:
10. Ինչո՞ւ այլ համայնքներ, մասնավորապես Սևանի ավազանի ու Արփա գետի հովտի չեն ճանաչվել ազդակիր, եթե այդ հարցով եղել են դիմումներ, ապա մերժման հիմքերն ու պատճառները:
11. ԳԱԱ Սևանա լճի փորձագիտական հանձնաժողովի անդամները նույնպես պետք է ներկայացնեն իրենց տրված դրական եզրակացությունների մասնագիտական հիմնավորումները:
12. Արմեն Սարգսյանը պետք է բացահայտի, թե ի՞նչ խնդիրներ են եղել Լիդիանի և ՀՀ կառավարության միջև 2013 թվականին, ինչպե՞ս են հարթվել այդ խնդիրները, և ի՞նչ մասնակցություն է ունեցել ինքը դրանում: Այս խնդրի հետ կապված ավելի մանարամասն տեսեք [այստեղ](#):
13. Լիդիանը ի՞նչ ֆինանսական հատկացումներ է կատարել պետական մարմիններին, որոնք առնչություն չեն ունեցել հանքարդյունաբերական ծրագրին, դրանց պայմանագրերը կամ համաձայնագրերը, բյուջեները և հաշվետվությունները:
14. Լիդիանը ի՞նչ ֆինանսներ է տրամադրել տեղական ինքնակառավարման մարմիններին, դրանց համաձայնագրերը, բյուջեները և հաշվետվությունները:
15. Լիդիանը ի՞նչ ֆինանսներ է տրամադրել հասարակական, բարեգործական և այլ կազմակերպություններին և հիմնադրամներին, ՋԼՄ-ներին, դրանց ցանկը, գումարների չափը, համաձայնագրերը:
16. Արդյո՞ք վերը նշված գումարները մտնել են ներդրումների ծախսերի մեջ, թե դրանք այլ ֆոնդերից են:
17. Գնդեվագում, Կեչուտում, Ջերմուկում Լիդիանի գործունեության հետ կապված եղել են արդյո՞ք չարաշահումների, կեղծիքների, խախտումների վերաբերյալ հայտարարություններ, հարուցված գործեր, եթե այո ինչ ընթացք են տվել իրավապահ և պատկան մարմինները:
18. Կոռուպցիոն ռիսկերը կապված կառավարության որոշումների, տարբեր հիմնադրամներին Լիդիանի տված փողերի, համայնքների ղեկավարներին ուղևորություններ տանելու, հողերի օտարման գործընթացների հետ կապված:

Համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և միջազգային կոնվենցիաների պահանջներին

1. ՇՄԱԳՓ օրենք

2. Սևանի մասին օրենք
3. Ընդերքի մասին օրենսգիրք
4. Բուսական և կենդանական աշխարհի մասին օրենք
5. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ օրենքի
6. Այլ օրենքներ և Կառավարության որոշումներ
7. Օրհուսի կոնվենցիա
8. Սնդիկի վերաբերյալ Մինիմատայի կոնվենցիա
9. Կենսաբազմազանության մասին կոնվենցիա

Լիդիանի ներկայացրած տեղեկությունների համադրում այլ անկախ մասնագիտական հետազոտությունների հետ

1. Ապարների թթվային դրենաժ, մակերևութային և ստորերկրյա ջրերի աղտոտում

Այս խնդիրը համարվում է մետաղական հանքերի շահագործման ամենաէական ու անկառավարելի ռիսկերից: Հաշվի առնելով Ամուլսար լեռան տեղադիրքը, նրա ջրագրական, ջրաերկրաբանական և ձևաբանական առանձնահատկությունները՝ մակերևութային և ստորգետնյա ջրերի վրա բացասական ազդեցությունը չափազանց մեծ, աղետալի մակարդակի սպառնալիք է ներկայացնում Հայաստանի կենտրոնական ու հարավային շրջանների համար, իսկ ֆինանսական իմաստով պետության համար անհաղթահարելի ծախս: 2006 թվականին արված մի հետազոտության արդյունքում պարզվել է, որ ԱՄՆ-ի 71 խոշոր հանքերի 75 տոկոսում առաջացել են խնդիրներ կապված ջրի որակի հետ՝ չնայած նրան, որ այդ հանքերի բնապահպանական գնահատման հաշվետվությունների գերազանց մեծամասնության մեջ ներկայացված է եղել, որ ջրերի աղտոտում չի առաջանա: Իսկ թթվային դրենաժի ներուժ ունեցող հանքերում գործնականում ստացվել է հետևյալ պատկերը՝ մակերևութային ջրերի աղտոտվածությունը գերազանցել է թույլատրելի նորմերը հանքերի 85 %-ում, իսկ ստորերկրյա ջրերինը՝ հանքերի 93 %-ում: Հետազոտված հանքերի 64 %-ում հնարավոր չի եղել կանխարգելել հարակից ջրային համակարգերի աղտոտումը՝ չնայած նրան, որ իրականացվել են մեղմացման տարբեր միջոցառումներ՝ պասիվ մաքրում, ապարների պատիճավորում և այլն:

Նմանատիպ միջոցառումներ է ցանկանում կիրառել նաև Լիդիանը Ամուլսարի դեպքում և իր հաշվետվություններում համոզված ներկայացրել է, որ իրեն դա 100 տոկոսով հաջողվելու է:

Լիդիանի կողմից ներկայացված ՇՄԱԳ-ի 349 էջում ներկայացված է. *«Ջրային ռեսուրսների պաշտպանությունը դատարկ ապարների թթվային արտահոսքերից լուրջ խնդիր է լինելու Ամուլսարի հանքավայրում, որը սակայն կարող է լուծվել նախագծային և ընթացակարգային միջոցներ ձեռնարկելու և բնապահպանական նորմերին խստորեն հետևելու շնորհիվ»:* Էջ 357. *Ամուլսարի հանքանյութն ունի թթվային արտահոսքեր արտադրելու պոտենցիալ: Հնարավոր է, որ նրա արտադրած քլորիդի և սուլֆատների խառնուրդով հարստացված ջրերի որակը գերազանցի մակերեսային ջրերի նորմերը: Թունազերծումից հետո ցիանիդի կոնցենտրացիաները բավարարելու են բեռնաթափվող ջրերի նորմերին: Ինֆիլտրացիոն հոսքը մինչ բեռնաթափումը մշակման է ենթարկվելու պասիվ մշակման համակարգում: Այս պոտենցիալը կարելի է կառավարել, եթե պոչանքները անցնեն համապատասխան մշակում մինչև ՊԿՀ ուղարկվելը»:* Էջ 365. *«Հանքի կոնտակտային ջրերը աղտոտման հնարավորություն ունեն: Աղտոտման*

ռիսկերը ներառում են թթվային ապարների դրենաժը (ԹԱԴ), բարձր աղային կոնցենտրացիաները (ինչպես օրինակ՝ սուլֆատները) և յուղերը (բեռնատար մեքենաների կայանատեղիից): ...Հինգերորդ տարում ակնկալվող ավելցուկային կոնտակտային ջրերը կցամաքեցվեն կենսաբանական մաքրման համակարգով մինչև Արփա գետ ուղղվելը»: Իսկ էջ 86-ում՝ «Թթվային ապարների դրենաժի բնութագրում բաժնում նշված է, որ իրականացվել են լրացուցիչ երկրաքիմիական փորձարկումներն ու կանխատեսումային մոդելավորումը և դրա հետ կապված հանքի ժամանակակից նախագծումն ու ԹԱԴ-ի նվազեցմանն ուղղված միջոցառումները»:

Այստեղ խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ նախկին կառավարության կողմից թույլտվություններ և դրական եզրակացություններ տալու ժամանակ չի փորձաքննվել ջրերի հնարավոր աղտոտման Լիդիանի ներկայացրած կանխատեսումների և մեղմացման միջոցառումների իրատեսությունը, հավաստիությունը, գիտական հիմնավորվածությունը: Դեռ ավելին՝ 2016 թվականի ապրիլին, երբ այս նախագծին տրվել է դրական եզրակացություն, հայերեն ներկայացված չեն եղել մի շարք կարևորագույն փաստաթղթեր՝ առանց որոնց ուսումնասիրման հնարավոր չէր գալ դրական կամ բացասական եզրակացության: Աշխատանքային խմբին այդպես պարզ չեղավ, թե պետության կողմից ո՞վ կամ ովքե՞ր են փորձաքննել այս խնդիրները՝ մանավանդ առանց Երկրաքիմիական փորձարկումներ ու կանխատեսումային մոդելավորում փաստաթղթի, Թթվային ապարների դրենաժի կառավարման և Մակերևույթային ջրերի կառավարման պլանների և Ստորերկրյա ջրերի մոդելավորման հայերեն տարբերակների առկայության:

Բարեբախտաբար այս հարցերի կապակցությամբ վերջին 1,5 տարվա ընթացքում ինտենսիվ ուսումնասիրություններ են իրականացրել ոլորտում համաշխարհային համբավ ունեցող չորս փորձագետներ Անն Մաեստր ԱՄՆ-ից, Անդրե Սոբոլսկին Կանադայից, Ռոջեր Մմարթը և Անդրեա Գերսոնը Ավստրալիայից (տես փորձագետների համառոտ կենսագրությունները՝ <https://bit.ly/2sabm9M>), և ներկայացրել են դրանց արդյունքները Հայաստանի հանրությանը, նախորդ և ներկա կառավարություններին և Լիդիանին: Նրանք մեկ տասնյակից ավել հաշվետվությունների տեսքով (ամբողջ ցանկը տեսեք [այստեղ](#)) գիտականորեն հիմնավորված ներկայացրել են Լիդիանի վերոնշյալ փաստաթղթերում, ռիսկերի գնահատումներում և կառավարման պլաններում առկա բազմաթիվ թերություններ, բացթողումներ, միջազգային չափանիշներով անընդունելի մեթոդների կիրառման դեպքեր, հետազոտված նմուշների անբավարար քանակներ, սխալ եզրահանգումներ և ենթադրություններ, ընդհանրապես չգնահատված կամ նվազեցված ռիսկեր, ընկերության պատասխանատվության մեխանիզմների բացակայություն և այլ լրջագույն խնդիրներ: Նաև 2017 թ.-ին՝ այսինքն դրական եզրակացություն ստանալուց մեկ տարի անց, պարզվել է, որ Լիդիանին դեռ անհրաժեշտ է կատարել մոտ երեք տասնյակ հանձնարարականներ և ուսումնասիրություններ, որոնցից մի մասը խոշոր են, խիստ ծախսատար և երկարաժամկետ: Դրանք վերաբերել են կույտային տարրավազման հարթակը աշխատանքային պլանով նախատեսված մակարդակին հասցնելուն, դատարկ ապարների լցակույտի աշխատանքային պլանին, երկրաքիմիական բնութագիրը և ԹԱԴ-ի կառավարումը աշխատանքային պլանով նախատեսված մակարդակին հասցնելուն, աղտոտվող ջրերի վնասագերծման համակարգերին և ջրային հաշվեկշռի համար կիրառված կանխատեսելի մոդելներին:

Փորձագետների հաշվետվություններում կան բազմաթիվ հիմնավոր փաստարկներ առ այն, որ Որոտան, Արփա և Դարբ գետերի, Կեչուտի և Սպանդարյանի ջրամբարների,

Որոտան-Արփա-Սևան թունելով Սևանա լիճ հոսող ջրերի, ինչպես նաև բազմաթիվ առվակների, քաղցրահամ և հանքային աղբյուրների ու ստորերկրյա ջրերի վրա սպասվում է լուրջ որակական և քանակական ազդեցություններ, ինչի հետևանքները ճիշտ գնահատված չեն կամ սխալ են մեկնաբանված Լիդիանի կողմից:

Ուղղակի ներկայացնենք այդ կետերից մի քանիսը.

1. Լիդիանը ընդունում է, որ հանքը ունենալու է ԹԱԴ, սակայն նրա հաշվետվություններում բացակայում են դրա արտազատման աղբյուրների, քանակի, ցուցանիշների կամ մեղմացման միջոցառումների մասին բավարար և վստահելի փորձարկումները: Ամուլսարի նախագծի ընթացքում հանքահանվող նյութերի զանգվածը հուշում է, որ ավելի քան 2 000 նմուշ պետք է ուսումնասիրվեն թթվահիմնային հաշվառման տեսանկյունից, մինչդեռ ուսումնասիրվել են մոտ 200 նմուշներ: Ի լրումն դրա, երկրաքիմիական փորձարկում է իրականացվել չափազանց քիչ քանակի նմուշների վրա և դրանք ներկայացուցչական չեն: Հանքակազմի տեսանկյունից ուսումնասիրվել են ստորին հրաբխային ապարների ընդամենը 11 նմուշ և վերին հրաբխային ապարների միայն 7 նմուշ: Հանքակազմի, երկրաքիմիական փորձարկումների և մակերեսային ու ստորգետնյա ջրերի վրա ազդեցության մոդելավորման վերաբերյալ առկա են էական հակասություններ և բացակայող ու ոչ ճշգրիտ տեղեկատվություն: Երկրաքիմիական գնահատականը և մոդելավորումը թթվագոյացման վերահսկման պլանավորման համար հիմնվելու ճշգրիտ տեղեկատվություն չի պարունակում:

2. Թթուների արտազատման ցուցանիշների չափման համար խոնավության խցիկային փորձարկումներ են անցկացվել միայն 5 ստորին հրաբխանստվածքային (ավելի բարձր ռիսկային) և 3 վերին հրաբխանստվածքային (պակաս ռիսկային) ապարների նմուշների վրա: **Նմուշների այդ քանակը ակնհայտորեն բավարար չէ միջազգային պրակտիկայում ընդունելի լինելու համար:** Թթվագոյացնող ապարների նմուշների կինետիկ փորձարկումը դադարեցվել է մինչև առավելագույն կամ կայուն վիճակի կոնցենտրացիաների հասնելը, ուստի, մոտակա առվակների և ստորգետնյա ջրերի վրա ազդեցության ողջամիտ հաշվարկներ չեն կարող արվել:

3. Օգտվելով Ընկերության տվյալներից և համադրելով դրանք ոլորտում բարձր գնահատական վայելող «Թթվային ապարների դրենաժի համաշխարհային ուղեցույցի» ([GARD Guide](#)) մոտեցումների հետ՝ միջազգային փորձագետները պնդում են, որ թեստավորված հանքաքարի ու դատարկ ապարների գրեթե բոլոր նմուշները պոտենցիալ առումով թթու առաջացնող են:

4. Դատարկ ապարների թափոնների ամեն 1000 տոննայի համար կպահանջվի առաջացող հիսունից վաթսուն տոննա թթվի ընթացիկ չեզոքացում: Մշակման ծախսերի գումարը սահմանելու համար պահանջվում են թթվագոյացման և չեզոքացման ցուցանիշների հաշվարկներ, այլ ոչ թե սուլֆիդի նմուշների վրա հիմնված սուկ արժեքներ, ինչպես դրանք գնահատվում են Լիդիանի հաշվետվություններում: Որևէ ապացույց չկա «մեղմ» ԹԱԴ-ի վերաբերյալ սխալ եզրակացությունը հիմնավորող այս կրկնվող հայտարարության համար: Այս եզրակացությունը հիմնավորելու համար ընտրված նմուշները ուղղակի սուլֆիդի ցածր պարունակություն ունեին, մինչդեռ մյուս նմուշները մի քանի շաբաթ հետո շատ թթու էին արտադրում (pH<3): Լիդիանի առաջարկված պատիճավորումը փորձարկված չէ, ուստի ապացուցված չէ, արդյո՞ք դա կկանխի թթվային դրենաժը: Լիդիանն առաջարկում է փորձարկումն սկսել արդյունահանումից հետո, իսկ եթե փորձարկումը ցույց տա որ մեթոդն արդյունավետ չէ, որևէ այլ պլան չկա նախատեսված:

5. Լիդիանի թեստերի արդյունքները ցույց են տալիս, որ Ամուլսարում կորզումից հետո մնացած ապարներից և կոշտ թափոններից արտահոսքում առկա կլինեն ծարիրի, մկնդեղի, պղնձի և ցինկի բարձր կոնցենտրացիաներ, որոնք անհամեմատ բարձր են Հայաստանի ջրի որակի ստանդարտներից (տես՝ [միջազգային փորձագետների վերջնական ամփոփագիրը](#)): Կանխատեսվում է, որ պոտենցիալ մտահոգիչ կոնցենտրացիաներով ամոնիում, ծարիր, մկնդեղ, բերիլիում, բիսմութ, կադմիում, պղինձ, կապար, մանգան, սնդիկ, մոլիբդեն, նիկել, նիտրատ, սելեն, արծաթ, վանադիում և ցինկ բոլորը միասին կարտանետվեն ջրուղիներ: Ինչպես փաստել են միջազգային փորձագետները՝ թթվային հոսքը կարող է «շարունակվել տասնյակ տարիներ կամ դարեր, և Հայաստանի կառավարության համար ընթացիկ ծախսերը հանքի գործունեության դադարեցումից հետո կարող են գերազանցել շահագործման ժամանակ պետության ստացած եկամուտները»: Ոչ պատշաճ վերահսկվող ԹԱԴ-ի հնարավոր ազդեցությունը առվակների, գյուղատնտեսության, ձկների և այլ բիոտայի, իսկ որոշ դեպքերում՝ մարդու առողջության վրա լավ հայտնի են: Ելնելով միջազգային օրինակներից՝ Հայաստանի կառավարության համար հանքի փակումից հետո ԹԱԴ-ի արտազատումների վերահսկման ծախսերի ծավալը կարող է կազմել հարյուր միլիոնավոր դոլարներ:

6. 2016 թվականին Հայաստանի կառավարության կողմից Ամուլսարի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին տրված պետական փորձագիտական [եզրակացությունում](#) որևէ ձևով չի հիշատակվում ԹԱԴ-ը, ԹԱԴ-ի կանխման և վերահսկողության անհրաժեշտությունը, առվակների, գետերի և ջրամատակարարման հնարավոր երկարաժամկետ աղտոտումը կամ հոսքերի ուղղությամբ դեպի ներքև ԹԱԴ-ի արտազատման բնապահպանական կամ առողջապահական հետևանքները: Ըստ ամենայնի, ՀՀ կառավարությունում չկա փորձագիտական ներուժ, որը կարող լիներ ճանաչել, գնահատել և մշտադիտարկել Ամուլսարի ԹԱԴ-ի կանխարգելումը կամ վերահսկել դրա հնարավոր հետևանքները Հայաստանի բնակչության համար: Նման ապարներով հանքերի դեպքում հանքավայրի փակումը մշտական գործընթաց է համարվում, այն կարող է տևել նույնիսկ 500 տարի: 200 տարվա հաշվարկով՝ ըստ դոկտոր Սոբոլևսկու՝ կրով մաքրման կայանի տեղադրումն ու ամենամյա պահպանումը կարժենա 125-180 մլն ԱՄՆ դոլար: Լիդիանը ոչ միայն չի նախատեսել նման կայանի կառուցում, այլև ամբողջ հանքի ենթակառուցվածքների փակման ծրագրի ֆինանսական երաշխիքն ընդամենը 34 մլն դոլար է: Իսկ դա նշանակում է, որ հանքախոռոչներից ու թափոնակույտից թթվային դրենաժից ջրերի մաքրման համար անհրաժեշտ ծախսերը մնալու են Հայաստանի կառավարության ու ժողովրդի ուսերին՝ էլ չենք խոսում այլ վտանգների և հետևանքների մասին:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թթվային արտահոսքը կարող է շարունակվել տասնամյակներ և դարեր՝ Լիդիանի ներկայացրած մշտադիտարկման կարճաժամկետ (5 տարի) տևողությունը անբավարար է: Քանի որ հանքահորերից արտահոսքը իր ճանապարհը ուղղում է դեպի աղբյուրների ջրերը, դա նույնպես պետք է մշտադիտարկվի թե՛ տեղամասում, թե՛ դրանից դուրս: Ավելին, նշված չէ, թե ինչ պետք է արվի և ում կողմից, եթե այդ ջրերի որակը իջնի սահմանված ստանդարտներից ներքև:

8. Ամուլսարի փակված հանքի համար առաջարկվող պասիվ մշակման համակարգերը ամբողջովին չեն թունագրկի ջուրը: Sovereign-ի կողմից առաջարկվող հայեցակարգային նախագիծը կձախողվի, քանի որ այն նախատեսված չէ այնպիսի թթվային դրենաժի համար, որը պարունակում է այլումինի և երկաթի բարձր կոնցենտրացիա: Նմանատիպ խնդիր է առաջանալու նաև կույտային տարրավազման հարթակի ջրերի մաքրման

Ժամանակ, քանի որ Լիդիանը ոչ մի բառ չի հիշատակել, թե ինչպես է մաքրելու մի շարք կարևոր աղտոտիչներ՝ ամոնիակը և նիտրատը, մկնդեղը, ծարիրը, սնդիկը, սելենը, ամենայն հավանականությամբ նոր առաջացած՝ թիոսելենատը: Լիդիանն ուղղակի թաքցրել է, որ տարրավազման հարթակում առաջանալու է նոր միացություն՝ թիոցիանատ, որը սուլֆիդային ապարների և ցիանիդի քիմիական ռեակցիայից առաջացած նոր խիստ թունավոր միացություն է: Ըստ դոկտոր Սոբոլսկու կանխատեսման՝ հարթակի 1 լիտր հեղուկում թիոցիանատի կոնցենտրացիան լինելու է 1000 միլիգրամ: Միայն թիոցիանատից մաքրելու համար անհրաժեշտ է հատուկ մաքրման կայան, որը պետք է երեք փուլով քայքայի նախ՝ թիոցիանատը, այնուհետև՝ ամոնիակը, իսկ այնուհետև՝ նիտրատը: Բացի այդ, միայն տարրավազման հարթակի փակումը և համապատասխան ակտիվ մաքրման կայանների գործարկումը պետք է տևի շուրջ 20 տարի, քանի որ այստեղ նույնպես սպասվում է դրենաժ: Միայն թիոցիանատից մաքրելու կայանի կառուցումն ու 20 տարի գործարկումը կարժենա շուրջ 10 մլն ԱՄՆ դոլար: Նման բան ներկայիս նախագծով նախատեսված չէ: Շահագործման դեպքում այս բոլոր աղտոտիչները թափվելու են Արփա գետ, Արփայում սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները գերազանցվելու են 2-ից 1000 անգամ:

9. Պետք է նաև հաշվարկվի Արփա գետում և կույտային տարրավազման հարթակից դեպի ներքև թեքության ստորգետնյա ջրերում սնդիկի կոնցենտրացիան՝ կույտային տարրավազման դեպի ներքև ջրահեռացման կանխատեսվող կոնցենտրացիաների շարքի կիրառմամբ: Սնդիկի կոնցենտրացիան ավելի քան 10 անգամ մեծ է, քան ԱՄՆ խմելու ջրի չափանիշով և Համաշխարհային բանկի արտանետման չափանիշով դետոքսիկացիայից հետո կույտային տարրավազման հարթակում դեպի ներքև ջրահեռացման կոնցենտրացիաների համար կանխատեսված կոնցենտրացիաները:

Միջազգային փորձագետների կողմից բացահայտված և արձանագրված նմանատիպ խնդիրներն ու բացթողումները բազմաթիվ են (մոտ երեք տասնյակ), ինչի արդյունքում նրանք հանգել են հետևյալ համատեղ եզրակացության.

«Ամուլսարի հանքի շահագործումը չի կարելի սկսել այնքան ժամանակ, քանի դեռ բաց մնացած էկոլոգիական բոլոր խնդիրները պատշաճ կերպով չեն ուսումնասիրվել անկախ մարմինների/խորհրդատուների կողմից: Նրանց հայտնաբերած բացթողումները պետք է ներմուծվեն թթվային և մետաղ պարունակող դրենաժի կառավարման պլանի մեջ, որոնք կներառեն նաև թե կառավարության, թե ընկերության պատասխանատվություններն ու պարտականությունները»:

[«Լիդիանի ներկայացրած Ամուլսարի ոսկու հանքավայրի նախագիծը չունի պատշաճ բնապահպանական գնահատական, իսկ երկարատև թթվագոյացումը սպառնում է ջրի որակին»](#) հաշվետվության մեջ կան ավելի մանրակրկիտ տվյալներ բոլոր խնդիրների վերաբերյալ, որոնց անտեսումը հղի է անկանխատեսելի հետևանքներով:

Ակնհայտ է, որ Լիդիանը կանխամտածված նվազեցրել է Ամուլսարում հանքի հնարավոր շահագործման էկոլոգիական ռիսկերը թթվային դրենաժի և ջրերի աղտոտման հետ կապված, իսկ դրանց մի որոշ մասն էլ ընդհանրապես թաքցրել է հանրությունից՝ նպատակ ունենալով ցույց տալ, թե բոլոր խնդիրները հեշտ կառավարելի են և ունեն շատ պարզ ու ոչ թանկարժեք լուծումներ: Բայց պարզվում է, որ իրականությունը լրիվ այլ է՝ կան բազմաթիվ անկառավարելի ռիսկեր, հարյուրավոր տարիների ընթացքում ջրերի լրջագույն աղտոտման խնդիրներ, որոնց կանխելու և վնասագերծելու համար

անհրաժեշտ են հարյուր միլիոնավոր դոլարների ծախս և թանկարժեք մաքրման համակարգեր՝ ինչը մնալու է Հայաստանի կառավարության և նրա քաղաքացիների ուսերին: Այդ ծախսերը կարող են գերազանցել 10 տարվա ընթացքում պետական բյուջե սպասվող մուտքերին՝ ինչը մեր պետության համար նաև տնտեսական տեսանկյունից է անիմաստ դարձնում այս տարածքում հանքի շահագործումը: Ավելորդ չենք համարում նշել, որ Լիդիանի կողմից մինչև 2014 թվականը ներկայացված ՇՄԱԳ-ներում այս խնդիրներն ընդհանրապես ներկայացված և քննարկված չեն եղել, իսկ նախորդ կառավարություններն էլ տարիներ շարունակ անուշադրության են մատնել տարբեր հարցադրումները՝ չնայած 2011 թվականից սկսած բազմիցս ասվել և գրավոր ներկայացվել են այս ծրագրի գրեթե բոլոր խնդրահարույց կողմերը: Նախորդ կառավարությունները նաև առանց սեփական անկախ մասնագիտական հետազոտություններն անելու անվերապահորեն հավաստացել ու վստահել են Լիդիանի եզրահանգումներին, իսկ մնացած մասնագետների փաստարկներն ընդհանրապես անտեսվել են:

Միջազգային փորձագետների բոլոր հաշվետվությունների և եզրակացությունների հղումները կարող եք գտնել [այստեղ](#):

2. Ջերմուկի վրա ազդեցություն

Ջերմուկի հանքային ջրերի վրա հնարավոր բացասական ազդեցությունների մասին շատ է գրվել ու խոսվել: Կան նաև նախորդ տարիների մասնագիտական կարծիքներ դրա մասին (տեսեք [այստեղ](#) և [այստեղ](#)), և կարծում ենք, որ նորերը կներկայացվեն նաև աշխատանքային խմբի համապատասխան անդամների կողմից: Միայն նշենք, որ Ջերմուկ հանքային ջուրը դա մեր ժողովրդի հարստությունն է և չի պատկանում միայն այս սերնդին: Նրանից օգտվելու և եկամուտ ստանալու իրավունք ունեն նաև հետագա բոլոր սերունդները, և մենք իրավունք չունենք վտանգելու այդ ջրերն ինչ-որ ժամանակավոր շահի համար:

Առանձին անրադառնանք նաև Ջերմուկ բրենդի և առողջարան քաղաքի իմիջի վրա բացասական ազդեցություններին, որոնք արդեն իսկ ի հայտ են եկել ու նաև դրանք են եղել հիմնական պատճառներից մեկը, որ համայնքի բնակիչներն ավելի կտրուկ դեմ արտահայտվեն այս ծրագրի իրականացմանը:

Լիդիանին 2007թ.-ից ֆինանսապես աջակցած ՀԲ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) Համապատասխանության ապահովման պաշտպան խորհրդականի (ՀԱՊԽ) գրասենյակը, հետաքննելով Ամուլսարի ծրագրի վերաբերյալ Հայաստանից ներկայացված բողոքները, 2017թ.-ի իր վերջնական [գեկուցագրում](#) հաստատում է, որ Ամուլսարի ոսկու հանքի Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատականում (ԲՄԱԳ) «Ջերմուկ բրենդի և Ջերմուկի, որպես տուրիստական քաղաքի վրա պոտենցիալ ազդեցությունները չեն գնահատվել և մեղմացվել թիվ 1 Կատարողական չափորոշիչի (ԿՉ1) պահանջներով», ինչպես նաև լիարժեքորեն չեն գնահատվել սոցիալական ազդեցությունները Գնդեվազ համայնքի վրա: Մեջբերում այդ գեկուցագրից.

«ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման (ԲՄԱԳ) գործընթացի վերահսկումը կապված Ջերմուկի՝ որպես առողջարանային քաղաք բրենդի վրա նախագծի պոտենցիալ ազդեցության հետ, համարժեք չի եղել ռիսկին: Ընդունվել է, որ քաղաքի ընկալման վրա անցանկալի ազդեցությունները կարող են հանգեցնել քաղաքի տուրիստական այցելուների թվի կրճատմանը: Այս ենթատեքստում, պահանջվում էր նախագծի ազդեցության

վերլուծությունը տուրիզմի վրա: Թեև Ջերմուկը ի սկզբանե չէր դիտարկվում որպես նախագծի ազդեցության տարածքի մասը, ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն համապատասխան միջոցներ է ձեռնարկել երաշխավորելու համար, որ դա այդպես լինի հաճախորդի կողմից միջազգային ԲՄԱԳ-ի պատրաստման ժամանակ: Սակայն, ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն երաշխիքներ չունի առ այն, որ ազդեցությունները, որոնք կարող են ազդել Ջերմուկի բրենդի վրա՝ որպես տուրիստական կենտրոնի, ինչպես օրինակ պայթյունների աղմուկը, տեսողական խանգարումները, և ավելի ընդհանուր ընկալումները, որոնք բխում են քաղաքին նախագծի մոտիկության հանգամանքից համապատասխանաբար գնահատվել են»:

Այսինքն Լիդիանը չի իրականացրել և խախտել է իր իսկ կողմից անընդհատ մատնանշվող ՄՖԿ չափորոշիչներից մեկը: Ավելացնենք, որ տաս տարի շարունակ Լիդիանի հիմնական բաժնետեր հանդիսացած ՄՖԿ-ն 2017թ.-ի մայիսին վաճառել է իր բոլոր արժեթղթերն ու դուրս եկել Ամուլսարի ծրագրից:

Այստեղ պետք է նաև նշել, որ հանքավայրի շահագործումը դեռ չսկսած՝ Ընկերության գործունեությունն արդեն իսկ հանգեցրել է բուժման և առողջացման նպատակներով տուրիստական հոսքերի կրճատման, որի հետևանքով առաջացած տնտեսական վնասները որևէ կերպ գնահատված չեն Ամուլսարի ՇՄԱԳ-ում և հանրային քննարկման չեն դրվել Ջերմուկի բնակիչների հետ: Ընդհանրապես Ջերմուկ քաղաքը մինչև 2016թ.-ը չի եղել ազդակիր համայնք և չի մասնակցել որոշումներ կայացնելու գործընթացներին: Սա ոչ միայն զարմանալի է, այլ նաև ՀՀ օրենքների և Օրհուսի կոնվենցիայի կոպիտ խախտում: Լինելով նախատեսվող հանքից գրեթե նույն հեռավորության վրա ինչպես մյուս, բայց ազդակիր համարված համայնքները, տարածաշրջանի կարևորագույն բնակավայրի բնակիչներն օտարված են եղել իրենց հարազատ քաղաքի ապագայի վրա լրջագույն ազդեցություն ունեցող ծրագրի մասին կարծիք հայտնելու իրավունքից: Չնայած նրան, որ 2016-ին Ջերմուկը դառավ ազդակիր համայնք, սակայն այդ քաղաքում այդպես էլ օրենքով սահմանված կարգով քննարկումներ չանցկացվեցին:

Իսկ Ամուլսարում սկսված շինարարական աշխատանքներն արդեն առաջացրել են լուրջ սոցիալական, ժողովրդագրական, առողջապահական, առողջարանային քաղաքի ռեժիմի պահպանման և այլ խնդիրներ: Իսկ ապագայում, ինչպես նշված է Ընկերության ԲՄԱԳ հաշվետվությունում՝ «նման ծրագրերի ընթացքում առաջացած սոցիալական խնդիրները ներառում են՝ ավլոհողի օգտագործման մակարդակի, մարմնավաճառության և դրա հետ կապված սեռական ճանապարհով փոխանցվող վարակների, ինչպես նաև հանցագործությունների և բռնությունների աճ»: Այս պարագայում դժվար է հավատալ առողջարանային քաղաքի բնականոն կյանքի շարունակման և նորմալ զարգացման հեռանկարին: Այսինքն մենք 10 տարվա ժամանակավոր 700 աշխատատեղի և իբրև թե սպասվող 480 մլն ԱՄՆ դոլար հարկերի դիմաց զոհաբերելու ենք Հայաստանի տասնամյակներ շարունակ ձևավորված բրենդներից մեկն ու սոցիալ-տնտեսական հարատև, դարերով զարգացման հնարավորություններ ունեցող տարածաշրջանը, որի ձևավորման վրա ծախսվել են հսկայական գումարներ ինչպես Խորհրդային տարիներին, այպես էլ դրանից հետո: Ի՞նչ հաշվարկների և գնահատումների հիման վրա է որոշվել, որ հնարավոր է Ամուլսարում հանք շահագործել և դրա հետ միաժամանակ պահպանել Ջերմուկ բրենդը: Ո՞վ և ինչպե՞ս է գնահատել, թե որքան կկազմի տնտեսական վնասն ու արդյո՞ք հետագայում ընդհանրապես հնարավոր կլինի վերականգնել առողջարանային քաղաքի համբավն ու գրավչությունը: Եթե մի պահ ենթադրենք, որ դա հնարավոր կլինի, ապա ո՞վ և ի՞նչ մեթոդիկայով է հաշվարկել, թե ինչ կարժենա դա Հայաստանի քաղաքացու համար:

Ընկերությունը նաև հավաստիացնում էր, որ փոշին արտանետումների աղբյուրներից ընդամենը 1 կմ շառավղով է տարածվելու, մինչդեռ 8-10 կմ հեռավորության վրա գտնվող Ջերմուկ քաղաքն արդեն իսկ զգում է փոշու ազդեցությունը՝ դեռևս շահագործումը չսկսած: Նույն վիճակն է նաև Կեչուտ և Գնդեվազ բնակավայրերում: Ինչ կլինի եթե սկսվեն լայնածավալ շահագործման աշխատանքներն ու պայթեցումները՝ միայն կարելի է պատկերացնել: Չնայած միջազգային բարձր չափանիշներով աշխատելու մասին հավաստիացումներին՝ 2018թ. մայիսի դրությամբ Ընկերությունն արդեն երեք անգամ վնասել էր Գնդեվազ գյուղի խմելու ջրի խողովակաշարը: Աղտոտվել էր նաև գյուղի ոռոգման ջրի ջրամբարը, իսկ կույտային տարրավազման հարթակի տարածքից կավային խառնուրդներով ջրերը լցվում էին Արփա գետ:

3. Որոտան-Արփա թունել

Հայաստանի կարևորագույն ջրատեխնիկական այս կառույցը, որի կառուցման համար հսկայական ֆինանսական և մարդկային ռեսուրսներ են ծախսվել, անցնում է Ամուլսարի ընդերքով՝ նախատեսվող հանքի ենթակառուցվածքներից 2-3 կմ հեռավորության վրա: Լիդիանի ՇՄԱԳ-ում չկա ոչ մի տվյալ այս թունելի ելակետային տեխնիկական վիճակի մասին: 120-րդ էջում նշված է միայն հետևյալը. *Հատակագծի տվյալներով (Բարայան և ուրիշներ, 1988թ. 1)*՝ *թունելը կառուցման ժամանակ բետոնապատվել է՝ հնարավորինս սահմանափակելով ստորերկրյա ջրերի հետ փոխազդեցությունը: Ներկայումս թունելը չի շահագործվում (Սպանդարյան ջրամբարի փականները փակ են՝ կանխելով ներհոսքը), սակայն թունելից զգալի արտահոսք կա: Ջրի քիմիական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թունելից ներկայումս արտահոսում են ստորերկրյա ջրեր: Ենթադրվում է, որ թունելի բետոնն շերտը վնասվել է, որի հետևանքով ստորերկրյա ջրերը ներթափանցում են թունել: Ստորերկրյա ջրերի մոդելավորումը ցույց է տալիս, որ թունելը համարյա իր ամբողջ երկայնքով գտնվում է տարածաշրջանային ջրի մակարդակի վրա կամ մի փոքր ցածր: Ջրի մակարդակից էական ցածր է միայն տարածքի հյուսիսային հատվածում: Այսպիսով, ստորերկրյա ջրերը կարող են թունել ներթափանցել ամբողջ երկայնքով:*

ՀՀ կառավարությունը նույնպես տեղյակ չէ թունելի ելակետային տեխնիկական վիճակից, ինչը նշանակում է, որ հետագայում բացասական փոփոխություններ առաջանալու դեպքում անհնար է նույնականացնել, թե դրանք երբ են տեղի ունեցել և ինչ պատճառներով: Հայտնի է միայն, որ Ամուլսարից տարեկան մոտ 5 միլիոն խոր. մետր ստորերկրյա ջուր ներծծվում է թունելի մեջ և բեռնաթափվում Կեչուտի ջրամբարում: Այսպիսի անորոշության պայմաններում հանքի շահագործման թույլատրություն տվողները վտանգի տակ են դրել մեր երկրի կարևորագույն կառույցներից մեկի անվտանգությունը, ինչպես նաև դրանով Կեչուտի ջրամբար և Սևանա լիճ տեղափոխվող ջրերի որակական կազմը: Թթվային ազրեսիվ ջրերի, ինչպես նաև պայթեցումների ցնցումների ազդեցության հետևանքով թունելի բետոնյա պատվածքները քայքայվելու և քանդվելու են, ինչը նշանակում է մենք տարիների ընթացքում կորցնելու ենք այս կարևորագույն կառույցն ու չենք կարողանալու լրացուցիչ ջուր տեղափոխել Սպանդարյանի ջրամբարից Կեչուտի ջրամբար և Սևանա լիճ: Ոչ Լիդիանը, ոչ էլ ՀՀ կառավարությունը չեն գնահատել և չեն փորձաքննել այս վտանգի իրատեսությունն ու այն ֆինանսական բեռը, որը կարող է առաջանալ դրա հետևանքով: Չկան նշված նաև ոչ մի վերահսկման և պատասխանատվության մեխանիզմներ:

ՇՄԱԳ-ի 524 էջում գրված է. *Սակայն, առավել հավանական է, որ բացահանքերից և ԴԱԼ-ից արտահոսող ստորգետնյա ջրերը չեն ներթափանցի թունել և ջրի որակի փոփոխություն տեղի չի ունենա:* Այսինքն Լիդիանն ուղղակի հավանական է համարում

որ ջրի որակի փոփոխություն չի լինի: Եվ այս կամայական ենթադրությունը վերաբերում է Կեչուտի ջրամաբար լցվող ջրերին, որոնք հետո հոսում են ինչպես Սևանա լիճ, այնպես էլ Արփա գետով մինչև Արենի գյուղ: Վերոնշյալ միջազգային փորձագիտական եզրակացությունների մեջ հստակ նշված է, որ այդ ջրերի աղտոտման վտանգը տարբեր ծանր մետաղներով շատ բարձր է, և չկան նախանշած գործուն մեխանիզմներ դրանք կանխարգելու համար:

ՇՄԱԳ-ի 529-530 էջերում գրված է. *Սպանդարյան-Կեչուտ թունել ներթափանցող ստորգետնյա ջրերի վրա կանխատեսվում է հնարավոր էական ազդեցություն: Սակայն, ստորգետնյա ջրերի ներհոսքը թունելում Կեչուտի ջրամբարը ջրով ապահովող միակ աղբյուրը չէ, հետևաբար, որակի այս անկումը տարածքի ջրային ռեսուրսների վրա նյութական ազդեցություն չպետք է համարվի: Հետևաբար, այս ազդեցության սահմանափակման կամ կանխման նպատակով լրացուցիչ մեղմացման միջոցառումներ չեն ներկայացվում:* Կարծում ենք սա մեկնաբանելն ուղղակի անիմաստ է: Պետությունը պիտի լուրջ վերլուծություն անի, թե ինչ իրական հետևանքներ են սպասվում թունելին և հաշվարկի իրական վտանգի մեծությունը, թե տեխնիկական, թե էկոլոգիական, և թե ֆինանսական առումով: Կարծում ենք ճիշտ չէ այսպիսի կարևոր հարցի դեպքում հենվել միայն շահագրգիռ կողմի հավանական ենթադրությունների վրա:

Կարդացեք նաև [այստեղ](#):

5. Բաց մնացած, չվերլուծված խնդիրներ

1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում նշված է. «վթարի ռիսկի գնահատում՝ գործընթաց, որի նպատակն է բացահայտել, վերլուծել և գնահատել արտադրական վտանգավոր օբյեկտում տեխնածին վթարի առաջացման հավանականության պայմանները, դրանց ընթացքի վրա ազդող գործոնների նկարագրությունը, վթարի մասշտաբները, մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության ծանրության աստիճանը»: «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից շահագործման նախապատրաստվող «Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի ոսկու կորզման գործարան» արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական [եզրակացության](#) մեջ չեք գտնի և ոչ մի նախադասություն, որն ինչ-որ կերպ առչություն ունի այս գործընթացի հետ: Եվ սա այն դեպքում, երբ այս ծրագրով նախատեսվում է տարեկան տեղափոխել, պահեստավորել և օգտագործել 1000 տոննա միայն նատրիումի ցիանիդ, ինչպես նաև այլ խիստ վտանգավոր քիմիական նյութեր: Դեռ ավելին՝ Լիդիանի կողմից այս փորձաքննության ներկայացված փաստաթղթերում նույնպես ոչ մի խոսք չկա վթարների ռիսկի գնահատման մասին: Խիստ թունավոր ցիանիդի փոխադրման, երթուղիների, պահպանության և օգտագործման տեխնիկական անվտանգության փորձաքննությունն նույնպես չի իրականացվել:

Վերոնշյալ ՊՈԱԿ-ի տված դրական եզրակացություններում բացառապես ներկայացված են տնտեսվարողի փաստաթղթերից արտագրված նկարագրությունները գործունեության մասին ու ընդհանրապես պարզ չէ, թե ինչ վտանգներ են գնահատել փորձագետները:

2. Պետք է լուրջ ուսումնասիրվեն և վերլուծվեն ՀՀ կառավարության առնվազն հետևյալ երեք որոշումների անհրաժեշտությունը, մասնագիտական հիմքերը, օրինականությունն ու դրանք ընդունելիս կոռուպցիոն կամ հովանավորչական գործարքների հնարավորությունները.

1. Կառավարության որոշումը Սևանա լճի ավազանի սխեմայի փոփոխության մասին - 28-րդ կետ՝ <https://www.e-gov.am/sessions/archive/2013/07/18/> տարաբնույթ և իրար հակասող հարցեր առաջացնող որոշում է սա:

2. Կառավարության որոշումը Կարմիր գրքի բույսերի մասին - 23-րդ կետ՝ <https://www.e-gov.am/sessions/archive/2014/07/31/> Այստեղ չկա ամփոփաթեթը, թե ինչ կարծիքներ են եղել այս որոշման հետ կապված տարբեր կառույցներից: Այս որոշումը փաստացի ընդունվել է Ամուլսարում WWF Armenia-ի կողմից հայտնաբերած Մատնունի ծիրանավոր բուսատեսակի խնդիրը լուծելու համար: Արդյո՞ք սա կոռուպցիայի կամ հովանավորչության դեպք չէ:

Այս խնդրի հետ կապված ավելի մանրամասն տեսեք [այստեղ](#):

3. Կառավարության որոշումը բացահանքերի ճանապարհների մասին - 7-րդ կետ՝ <https://www.e-gov.am/sessions/archive/2015/03/10/> Այստեղ նույնպես չկա ամփոփաթեթը, թե ինչ կարծիքներ են եղել այս որոշման հետ կապված տարբեր կառույցներից: Այս որոշումն ընդունելուց անմիջապես հետո Լիդիանը հայտարարություն տարածեց այն մասին, որ սա հնարավորություն է տալիս իրենց փոփոխել նախագիծն ու շահագործման ծախսերը նվազեցնել մոտ 100 միլիոն դոլարով: Զարմանալիորեն կառավարությունն ընդունել է այս որոշումն հենց այն ժամանակահատվածում, երբ Լիդիանն ուներ լուրջ խնդիրներ Ամուլսարի ծրագիրը սկսելու համար ֆինանսավորում գտնելու գործընթացում: Կարծում ենք, որ սա դասական կոռուպցիոն որոշում է:

Այս խնդրի հետ կապված ավելի մանրամասն տեսեք [այստեղ](#):

2018թ.-ի մայիսի 29-ին ՀՀ վարչապետին ուղղված այս [նամակում](#) կան նկարագրված նաև այլ մանրամասներ այս ծրագրի վերաբերյալ:

Հ.Գ. Աշխատանքային խմբի առաջին առաջադրանքից պարզ եղավ, որ 12 աշխատանքային օր ժամկետը բավարար չէ լիարժեք քննարկումներ և ուսումնասիրություններ անելու համար: Բազմաթիվ փաստաթղթեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով այդպես էլ հասանելի չեղան: Հնարավորություն չեղավ կատարել տեղազննում ծրագրի տարածքում, ինչպես նաև քննարկումներ անել փորձաքննության դրական եզրակացություններ տված փորձագետների հետ: Բազմաթիվ հարցեր, որոնց մի մասը նշված է սկզբում՝ այդպես էլ մնացին անպատասխան: Աշխատանքային խումբը ոչ մի ֆինանսական աջակցություն չստացավ կառավարությունից ուսումնասիրվող տարածք այցելելու կամ տեղի բնակիչների Երևան գալու համար:

Հուսով եմ հաջորդ առաջադրանքի ժամանակ ավելի արդյունավետ կլինի աշխատանքային խմբի գործունեությունը:

Լևոն Գալստյան